ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
07806692

հեռ. /0267/ 2-14-02 Ֆաքս ,fax /0267/ 2-14-02 E-mail: berdmedikal@yandex.com
ՀՀ Տավուշի մարզ ք.Բերդ Ա.Մանուկյան 25

26 օգոստոսի 2024թ. N 342

«Աննարկա» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 02656691)
հասցե՝ ք. Երևան, Քաջազնունի փ., 11/23

«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից կազմակերպված «ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/07» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել «Աննարկա» ՍՊ ընկերությունը: Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) «Աննարկա» ՍՊ ընկերությունը հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «Աննարկա» ՍՊ ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 2, 4, 5, 6 և 7-րդ չափաբաժինների մասով, ինչից հետո «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության և «Աննարկա» ՍՊ ընկերության միջև 15.03.2024թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/07-1 ծածկագրով պայմանագիր:

ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ բժշկական կենտրոնի հետ 15.03.2024թ-ին կնքված ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/07-1 պայմանագրով Վաճառող հանդիսացող «Աննարկա» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 02656691) իրական շահառու, 100 տոկոս բաժնետերը 2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 23-ը հանդիսացել է Երեմ Արկադիի Սարգսյանը *(ՀԾՀ՝ 1101770244)* : 2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի մայիսի 11-ը Երեմ Արկադիի Սարգսյանին 100 տոկոս բաժնետիրական իրավունքով է պատկանել նաև «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերությունը:

Համաձայն տեղեկագրում հրապարակված տեղեկատվության՝ «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերությունը 2023 թվականի մայիսի 6-ից մինչև 2025 թվականի հունիսի 20-ը ներառյալ ընդգրկվել է Ցուցակում: Ցուցակում ընդգրկվելու պահի դրությամբ «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնետերը և իրական շահառուն հանդիսացել է Երեմ Սարգսյանը: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի «ա.»

պարբերության՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝ տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից:

Կարգի 121-րդ կետով՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության և «Աննարկա» ՍՊ ընկերության միչև 15.03.2024թ. կնքված ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/07-1 ծածկագրով պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը 2024թ. օգոստոսի 23-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները կազմում են համապատասխանաբար՝ 81450 (ութսունմեկ հազար չորս հարյուր հիսուն) և 122175 (մեկ հարյուր քսաներկու հազար մեկ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, որոնք անհրաժեշտ է վճարել «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության «Արդշինբանկ» ՓԲԸ «Տավուշ» մասնաճյուղում բացված 2477800186580010 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2024թ. սեպտեմբերի 4-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները, ապա «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը «Աննարկա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հիմք ընդունելով «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության և «Աննարկա» ՍՊ ընկերության միչև 15.03.2024թ. կնքված ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/07-1 ծածկագրով պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ տեղեկացնում եմ, որ այդ պայմանագրով ձեռք բերվելիք ապրանքները «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից գնելու դեպքում «Աննարկա» ՍՊ ընկերությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի բարձր արժեքով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Հարգանքով՝
տնօրենի պժկ Զ. Ծատուրյան